ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2025-6-6-Ա

ք. Երևան 10.07.2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2025 թվականի հուլիսի 10-ի նիստում քննարկեց 2024 թվականի դեկտեմբերի 11-ին հայտատուի ներկայացուցիչ Լաուրա Ղուկասյանի կողմից ներկայացված՝ «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ ընկերության (ՀՀ, Արարատի մարզ 0802, ք. Մասիս, Հրանտ Վարդանյան փ. 10, AM) «DIAMOND» (No20232835) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 34-րդ դասի ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում ազգային և միջազգային գրանցման հիման վրա պահպանվող «Բլյու Դայմոնդ Блю Даймонд Blu Diamond» («Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ, ք. Մասիս, Արդրունաբերական հանգույց, Գործարանային 10 AM, N 21279, 01.04.2014թ.), «DIAMOND CUT», «PARLIAMENT DIAMOND CUT», «PARLIAMENT DIAMOND DUST» (Philip Morris Brands Sàrl, Quai Jeanrenaud 3CH-2000 Neuchâtel (CH), IR 1099578, IR 1069726, IR 1163727) բառային և համակցված ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) կարգի 130-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման կարող են համարվել համակցված ապրանքային նշանները և ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանի «DIAMOND»

գրառումն ամբողջությամբ ներառված է ավելի վաղ գրանցված ապրանքային նշաններում:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 34-րդ դասի ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում միջազգային գրանցման հիման վրա պահպանվող «DIAMOND CUT», «PARLIAMENT DIAMOND CUT», «PARLIAMENT DIAMOND DUST» (Philip Morris Brands Sàrl, Quai Jeanrenaud 3CH-2000 Neuchâtel (CH), IR 1099578, IR 1069726, IR 1163727) ապրանքային նշաններին

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է:

Բողոքարկողի ներկայացուցիչը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում մեկ դեմ և 6 կողմ ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայտատուի ներկայացուցիչ Լաուրա Ղուկասյանի կողմից ներկայացված «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ ընկերության «DIAMOND» (No20232835) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ